Հավելված N 1
ՀՀ կառավարության 2023 թվականի
ապրիլի 13-ի N 535-Ա որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՂԻՊԱՏՐՈՒՇ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ «ՄԱՅԼԵՌ» ՀԱՆԳՍՏԱՎԱՅՐԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ

| **Միջոցառման անվանումը** | **Միջոցառման նկարագիրը** | **Կատարողը** | **Ֆինանսական գնահատականը** | **Ֆինանսավորման աղբյուրը** | **Կատարման ժամկետը** |
|---|---|---|---|---|---|
| Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Եղիպատրուշ բնակավայրի «Մայլեռ» հանգստավայրի ասֆալտապատ ավտոճանապարհի կառուցում | Սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված ծրագծին համապատասխան ավտոճանապարհի կառուցում:<br><br>Մասնավորապես՝ | 1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | | | |
| | 1. Ավտոճանապարհի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի և դրանց փորձաքննության ծառայությունների ձեռքբերում: | | 13 մլն ՀՀ դրամ | ՀՀ 2023 թ. պետական բյուջե | 2023 թվական |
| | 2. Անհրաժեշտ հողատարածքի ձեռքբերման և ՀՀ անվամբ պետական գրանցման գործընթացի իրականացում: | | 87 մլն ՀՀ դրամ** | ՀՀ 2023 թ. պետական բյուջե | 2023 թվական |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 3. Ձեռք բերված հողամասերի նպատակային նշանակության փոփոխություն<br><br>4. Շինարարական աշխատանք-ների, տեխնիկական, հեղինա-կային հսկողության ծառայու-թյունների ձեռքբերում, շինա-րարական աշխատանքների իրականացում: | | --------------<br><br>800 մլն ՀՀ դրամ** | -----------<br><br>ՀՀ 2023-2024 թվականների պետական բյուջե | 2023 թվական<br><br>2023-2024* թվականներ |

* Շինարարական աշխատանքների մեկնարկը կախված ազդակիր հողերի իրացման ժամկետներից, իսկ շինարարական աշխատանքների ժամկետը կախված է նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա շինարարական աշխատանքների համար սահմանվող օրացուցային գրաֆիկից:
** Սույն հավելվածում նշված նոր ճանապարհի կառուցման, ինչպես նաև ազդակիր հողերի իրացման համար ներկայացված ֆինանսական գնահատականը նախնական է, ուստի դրա հստակ արժեքը և համապատասխան գնահատականները պայմանավորված են մի շարք գործոններով, այդ թվում՝ տեղանքով, անհրաժեշտ հողատարածքների ձեռքբերման ծավալներով և այլն, դրանք հնարավոր է հստակեցնել միայն տվյալ ճանապարհի կառուցման նախագծանա-խահաշվային փաստաթղթերի և հողերի փոխհատուցման արժեքների առկայության դեպքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

14.04.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ